Հայաստանի Հանրապետության
Կրթության, Գիտության
Մշակույթի և Սպորտի
Նախարարություն

«Հանրապետական N 2 հատուկ
կրթահամալիր» ՊՈԱԿ

Республика Армении
Министерство Образования,

Науки, Культуры и Спорта
«Республиканский Специальный
Учебный комплекс N 2» ГНКО
г. Ереван

Q. Երևան, Ռաֆֆու 113
☎ 74-22-06 / 74-20-81
էլ. ✉ inga.avetisyan.79@mail.ru

N Գ-1378
«12», 09 2023 թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՏԻԿԻՆ ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Հակոբյան

Ներկայացնում եմ <<Հանրապետական N2 հատուկ կրթահամալիր>> ՊՈԱԿ-ի թափուր տեղերի վերաբերյալ տեղեկատվություն:

Մրցույթ՝ ՀՀ Երևան մարզի , Հանրապետական N2 հատուկ կրթահամալիր ե ՊՈԱԿ-ի նախնական մասնագիտական / արհեստագործական/ կրթական ծրագրով <<Կարի արտադրության տեխնոլոգիա>> մասնագիտությամբ՝ 0.7 դրույքաչափով արտադրական ուսուցման վարպետի և մասնագիտական առարկայի շաբաթական 9.8 դասաժամով, <<Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում>> մասնագիտությամբ շաբաթական 4,8 դասաժամով, պատմության ուսուցչի շաբաթական 14 դասաժամով, ֆիզկուլտուրայի շաբաթական 16 դասաժամով, հանրակրթական հատուկ կրթական ծրագրով հասարակագիտության՝ շաբաթական 9 դասաժամ, հայոց լեզու գրականության և խոսքի մշակույթի հիմունքներ շաբաթական 9 դասաժամ, <<Այգեգործություն>> շաբաթական 8 դասաժամ առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,

- ,Հանրակրթության մասինե ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ-ի սեպտեմբերի 14-ից մինչև ս/թ սեպտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 18:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թ. սեպտեմբերի 29-ին՝ ժամը 11:00-ին, Հանրապետական N2 հատուկ կրթահամալիրում , հասցե Ք. Երևան Ռաֆֆու 113 : Տեղեկությունների համար զանգահարել 010742206 հեռախոսահամարով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ Լ. Ժ. ԱԴԱՄՅԱՆ